ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ և ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ

Հ Ր Ա Վ Ե Ր

2019 ԹՎԱԿԱՆԻՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

ՄՐՑՈՒՅԹԻ

1. Սույն մրցույթի հրավերը տրամադրվում է ի լրումն մրցույթի մասին «Հայկական ժամանակ» օրաթերթի 2019 թ. մայիսի 21-ի թիվ 93 (4679) համարում տպագրված հայտարարության:
2. Կազմակերպությունը, որին հատկացվում է դրամաշնորհ, որոշվում է ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N1937-Ն որոշման համաձայն կազմակերպվող և անցկացվող մրցույթի արդյունքներով:
3. Սույն մրցույթն անցկացվում է 2019 թվականի Զբոսաշրջության զարգացման ծրագրով նախատեսված հետևյալ միջոցառումների իրականացման համար կազմակերպությունների 2019 թվականի ընտրության նպատակով՝
    1) **Էլեկտրոնային (թվային) մարքեթինգի իրականացում**
    2) **Գովազդատեղեկատվական նյութեր բոլոր նպատակային շուկաների համար**
    3) **«Հայաստանյան և օտարերկրյա լրագրողների և զբոսաշրջության ոլորտի մասնագետների ճանաչողական այցերի կազմակերպում»** միջոցառման շրջանակներում հայաստանյան լրագրողների և նպատակային շուկաներից օտարերկրյա լրագրողների, զբոսաշրջության ոլորտի մասնագետների ճանաչողական այցերի կազմակերպական ապահովում, այդ թվում՝ տրանսպորտային, հյուրանոցային, սննդի կազմակերպման, հուշանվերների ձեռքբերման ծառայություններով ապահովում,
    4) **Զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացմանն ուղղված, պատմամշակութային հուշարձանները և բնության հատուկ պահպանվող տարածքները ներառող զբոսաշրջության մեծ ներուժ ունեցող նոր ուղղությունների զարգացում**
    5) **«Հայաստանի մարզերում առնվազն 5 ավանդական փառատոների կազմակերպում»**,
    6) **«Ենթակառուցվածքների և մարդկային ռեսուրսների զարգացում» բաղադրիչի շրջանակներում քայլարշավային երթուղիների նշագրում**
    7) **Զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեության ապահովում**
    8) **«Ենթակառուցվածքների և մարդկային ռեսուրսների զարգացում» բաղադրիչի շրջանակներում զբոսավարների պատրաստման առնվազն 2 դասընթացների անցկացում,**
    9) **«Միջազգային համագործակցություն» բաղադրիչի շրջանակներում պաշտոնական պատվիրակությունների և մասնագետների փոխայցելությունների կազմակերպական ապահովում և համապատասխան պատվերի հիման վրա Հայաստանում առնվազն մեկ միջազգային նշանակալի միջոցառման կազմակերպչական աշխատանքների**

ապահովում, (տրանսպորտային, հյուրանոցային, սննդի կազմակերպման, հուշանվերների ձեռքբերման ծառայություններով ապահովում, համաժողովների և ֆորումների կազմակերպում):

4. Մրցույթին մասնակցության հայտ կարելի է ներկայացնել ինչպես մեկ, այնպես էլ մի քանի միջոցառումների իրականացման համար:
5. Մրցույթում հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որը մրցութային հանձնաժողովի կողմից ստանում է առավելագույն գնահատականը:
6. Մրցույթին մասնակցելու համար ներկայացվում է հավելված 1-ով սահմանված ձևի հայտ:
7. **Հայտին կից ներկայացվում է**

7. 1 հայտատու կազմակերպության իրավասու մարմնի որոշումը մրցույթին սույն հրավերով նախատեսված պայմաններով մասնակցելու վերաբերյալ,

7. 2 նմանատիպ միջոցառում իրականացնելու՝ հայտատու կազմակերպության փորձի նկարագրություն, բացառությամբ սույն հրավերի 3-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված միջոցառման համար:

Միաժամանակ սույն հրավերի 3-րդ կետով նախատեսված յուրաքանչյուր միջոցառումների համար՝

7. 3. սույն հրավերի 3-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված «**Էլեկտրոնային (թվային) մարքեթինգի իրականացում**» միջոցառման համար՝

- հետևյալ ծառայությունները իրականացնելու համար համապատասխան գործիքակազմ և մասնագետների վերաբերյալ տեղեկատվություն՝ կայքի վարում և ամբողջական սպասարկում, հոսթինգի սպասարկում, էլեկտրոնային բաներների դիզայներական աշխատանքներ, կայքի բովանդակության մշակում և թարգմանություն, սոցիալական մեդիա մարքեթինգ (SMM), օնլայն գովազդ, որոնողական համակարգերում օպտիմալացման ծառայություններ (SEO), էլեկտրոնային նամակագրությամբ մարքեթինգ (email marketing), մեյլչիմփ (mailchimp) հարթակի սպասարկում.
- առնվազն 5 խոշոր ընկերության մասին, այդ թվում զբոսաշրջության ոլորտի, էլեկտրոնային մարքեթինգի իրականացման փորձ:
- հետևյալ թիրախային շուկաներում թվային մարքեթինգի իրականացման փորձ՝ Ռուսաստանի Դաշնություն, Իրանի Իսլամական Հանրապետություն, Վրաստան, Լիբանան և Պարսից Ծոցի արաբական երկրների առնվազն մեկ երկիր, Եվրոպական (Իտալիա, Ֆրանսիա, Գերմանիա, Ավստրիա, Լեհաստան) երկրներից առնվազն երկուսում, Չինաստան.
- ծառայությունների մատուցման միավորների գնային առաջարկ:

7. 4. սույն հրավերի 3-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված «**Գովազդատեղեկատվական նյութեր բոլոր նպատակային շուկաների համար**» միջոցառման իրականացման համար տեղեկատվություն

- ներքոնշյալ տպագրական հնարավորությունների վերաբերյալ՝

տեխնիկական հագեցվածություն լայնաֆորմատ, UV օֆսեթ տեխնոլոգիաներով, պերգամենտ տեսակի, ուռուցիկ, պանտոն ներկերով և փորվածքով տպագրություն իրականացնելու, էջերի ձևավոր կտրվածք և յուղային լաքապատում անելու և

բրոշյուրվող կամ կազմվող գրքի մամուլները մեքենայի միջոցով թելերով ամրացնելու համար:

- գնացուցակ հետևյալ ծառայությունների համար, նշելով նաև 1 միավոր ապրանքի արժեքը՝
  - *դիզայներական մոդելավորման ծառայություններ*՝ շնորհանդեսների, բաներների, բրոշյուրների, այդ թվում՝ էլեկտրոնային, թռուցիկների, տեղեկատվական թերթիկների, քարտեզների, նոթատետրերի, թղթապանակների, գրիչների, տոպրակների և ծրարների համար
  - *թարգմանչական ծառայություններ* հայերենից, ռուսերենից կամ անգլերենից՝ ներգրավելով օտար լեզուն կրող մասնագետների հետևյալ լեզուներով՝ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, պարսկերեն, արաբերեն, ռուսերեն և չինարեն
  - *տպագրական ծառայություններ* տարբեր ձևափաչերով՝ բաներների, բրոշյուրների, թռուցիկների, տեղեկատվական թերթիկների, քարտեզների, նոթատետրերի, թղթապանակների, գրիչների վրա, տոպրակների վրա և ծրարների համար
  - *բովանդակության մշակման ծառայություններ*՝ բրոշյուրներիի, հոդվածների քարտեզների, թռուցիկների, տեղեկատվական թերթիկների, բաներների և շնորհանդեսների համար:

7. 5. սույն հրավերի 3-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված «**Հայաստանյան և օտարերկրյա լրագրողների և զբոսաշրջության ոլորտի մասնագետների ճանաչողական այցերի կազմակերպում**» միջոցառումների համար տեղեկատվություն ծառայությունների գների վերաբերյալ:

7. 6. սույն հրավերի 3-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված «**Զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացմանն ուղղված՝ պատմամշակութային հուշարձանները և բնության հատուկ պահպանվող տարածքները ներառող զբոսաշրջության մեծ ներուժ ունեցող նոր ուղղությունների զարգացում**» միջոցառման համար մանրամասն նկարագրված ծրագիր, որը ներառում է յուրաքանչյուր ուղղության հայեցակարգային մոտեցում, զարգացման գործընթաց և շնորհանդեսի կազմակերպում: Մասնավորապես

- ներկայացնել զբոսաշրջային մեծ ներուժ ունեցող նոր ուղղությունների՝ զարգացման հայեցակարգեր, որոնք բաղկացած կլինեն նախնական ոլորտային քարտեզագրված վերլուծությունից, ռազմավարությունից և գործողությունների ծրագրից
  - **գաստրոնոմիական,**
  - **հնագիտական**
  - **արհեստագործական**
- Հայեցակարգերի ներկայացման ձեաչափ և ծախսերի նախահաշիվ՝ տեղեկատվություն իրականացվող միջոցառումների անվանումների, քանակների, գների և դրանց համար նախատեսվող ծախսերի (նաև համաֆինանսավորման) վերաբերյալ:

7. 7 սույն հրավերի 3-րդ կետի 5-րդ ենթակետով նախատեսված «**Հայաստանի մարզերում առնվազն 5 ավանդական փառատոների կազմակերպում**» միջոցառման իրականացման համար մանրամասն նկարագրված ծրագիր, որը յուրաքանչյուր փառատոնի համար ներառում է՝

- առնվազն 10 տաղավարով տեղական ավանդույթների ու մշակույթի, այդ թվում զբոսաշրջային ներուժի և տարբեր զբոսաշրջային արդյունքների ներկայացում
- տեղի բնակիչների ներգրավվածություն՝ նպաստելով հյուրընկալող և շրջակա համայնքներում տնտեսական և մարդկային ներուժի բացահայտմանն ու զարգացմանը,
- միջոցառման ընթացքում մշակութային միջոցառումների կազմակերպում՝ տեղական ներուժի ներգրավմամբ,
- միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, այդ թվում՝ տեղական և միջազգային տպագիր, առցանց և/ կամ հեռուստատեսային ՀԼՄ-ների միջոցով փառատոնի մասին իրազեկվածության բարձրացում, միջազգային հյուրերի, այդ թվում ոլորտի մասնագետների և հայտնի բլոգերների և/կամ ՀԼՄ ներկայացուցիչների մասնակցության մասին տեղեկատվություն,
- միջոցառման ընթացքում առնվազն 3000 այցելուների մասնակցություն,
- միջոցառման իրականացման ծախսերի նախահաշիվ՝ տեղեկատվություն իրականացվող միջոցառումների անվանումների, քանակների, գների և դրանց համար նախատեսվող ծախսերի (նաև համաֆինանսավորման) վերաբերյալ:

7. 8 սույն հրավերի 3-րդ կետի 6-րդ ենթակետով նախատեսված «**Ենթակառուցվածքների և մարդկային ռեսուրսների զարգացում**» **բաղադրիչի շրջանակներում քայլարշավային երթուղիների նշագրում**» միջոցառման իրականացման համար մանրամասն նկարագրված միջոցառումների ծրագիր, որն ներառում է՝

- ժամանակացույց ՀՀ երկու մարզերում զբոսաշրջային գրավչություն և հետաքրքրություն ներկայացնող առնվազն 5-ական քայլարշավային երթուղիների՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն նշագրման վերաբերյալ,
- միջոցառման իրականացման ծախսերի նախահաշիվ՝ տեղեկատվություն իրականացվող միջոցառումների անվանումների, քանակի, միավորի գնի և դրանց համար նախատեսվող ծախսերի (նաև համաֆինանսավորման) վերաբերյալ:

7. 9 սույն հրավերի 3-րդ կետի 7-րդ ենթակետով նախատեսված «**Զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեության ապահովում**» միջոցառման համար հետևյալ տեղեկատվության առկայությունը՝

- համապատասխան տարածք և կահավորում,
- տեղեկատվական կենտրոնի գործունեության առնվազն 3 տարվա փորձ,
- տեղեկատվական կենտրոնի կենտրոնական մուտքը ապահովված լինի «Այցելուների տեղեկատվական կենտրոն» անվանմամբ ցուցանակով,
- գործողությունների տարեկան ծրագիր

7. 10 սույն հրավերի 3-րդ կետի 8-րդ ենթակետով նախատեսված «**Ենթակառուցվածքների և մարդկային ռեսուրսների զարգացում**» **բաղադրիչի շրջանակներում զբոսավարների պատրաստման դասընթացների անցկացում**» միջոցառման համար՝

- մանրամասն նկարագրված զբոսավարների պատրաստման (վերապատրաստման) դասընթացների ծրագիր - ուղեցույց՝ համապատասխան միջոցառումների ժամանակացույցով (առարկաների ցանկ համապատասխան դասաժամերով),
- զբոսավարների համար միջազգային փորձի փոխանակման ծրագրի նկարագրություն
- միջոցառման իրականացման ծախսերի նախահաշիվ՝ համապատասխան համաֆինանսավորմամբ:

7. 11. սույն հրավերի 3-րդ կետի 9-րդ ենթակետով նախատեսված **«Միջազգային համագործակցություն» բաղադրիչի շրջանակներում պաշտոնական պատվիրակությունների և մասնագետների փոխայցելությունների կազմակերպական ապահովում և համապատասխան պատվերի հիման վրա Հայաստանում առնվազն մեկ միջազգային նշանակալի միջոցառման կազմակերպչական աշխատանքների ապահովում»** միջոցառումների համար տեղեկատվություն ծառայությունների գների վերաբերյալ:

8. Բացի սույն հրավերի 7-րդ կետով նախատեսված փաստաթղթերի հայտատուն իր հայեցողությամբ կարող է ներկայացնել այլ փաստաթղթեր, նյութեր, այդ թվում նաև տեղեկատվություն համաֆինանսավորման հնարավորության վերաբերյալ:
9. Գնահատումն իրականացվում է Հրավերի հավելված 2-ով նախատեսված գնահատման կարգին և չափանիշներին համապատասխան:
10. Մրցույթում հաղթող ճանաչված հայտատուի ներկայացրած միջոցառման իրականացման ծրագիրն ու նախահաշիվը ներառվում են նրա հետ կնքվող նախնական պայմանագրում:
11. Հայտը ներկայացվում է հայերեն լեզվով՝ սոսնձված, կնքված (կնիք ունենալու դեպքում) և ստորագրված ծրարով: Ծրարում ներառված փաստաթղթերը պետք է կազմված լինեն բնօրինակից և թվով վեց կրկնօրինակներից, որոնց վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «կրկնօրինակ» բառերը:
12. Հայտը ներկայացվում է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն հետևյալ հասցեով՝ ք. Երևան, Միեր Մկրտչյան 5, 6-րդ հարկ, 601 սենյակ, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության առաջին բաժին՝ մինչև 2019 **թվականի** հ**ունիսի** 24-**ը**, **ժամը** 16-00-**ն**:
13. Հայտատուին տրվում է հայտն ընդունելու մասին տեղեկանք՝ հայտը ընդունելու և գրանցելու հետ միաժամանակ:
14. Հանձնաժողովի գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով, կոլեգիալության սկզբունքով: Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է հանձնաժողովի անդամների առնվազն երկու երրորդը, և հանձնաժողովի որոշումը համարվում է ընդունված, եթե դրա օգտին քվեարկել է նիստին ներկա անդամների կեսից ավելին: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք, քվեարկում է կողմ կամ դեմ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի, իսկ նրա բացակայության դեպքում նիստը նախագահողի (այսուհետ՝ նիստը վարող) ձայնը վճռորոշ է:
15. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են, և յուրաքանչյուր նիստի արդյունքում հանձնաժողովը հաստատում է այդ նիստի արձանագրությունը: Արձանագրությունը պետք է պարունակի նաև տեղեկություններ հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին:
16. Հայտատուները՝ մրցույթի մասնակիցները կարող են մրցույթի հրավերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալ մրցութային հանձնաժողովի քարտուղարից: Գրավոր հարցմանը գրավոր պարզաբանում կտրվի հարցումը մուտքագրվելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:
17. Հանձնաժողովի որոշմամբ մրցույթի հրավերում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք չեն կարող հանգեցնել մրցույթի հրավերի էական պայմանների փոփոխմանը:
18. Մրցույթի հրավերում փոփոխություն կատարվելու դեպքում հայտեր ներկայացնելու ժամկետի ավարտը հաշվվում է այդ փոփոխությունների մասին մամուլում հրապարակվելու օրվանից:

19. Սույն հրավերի համաձայն մրցույթի հրավերում փոփոխություն կատարվելու դեպքում ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության Հրապարակային գնումների պետական կոմիտեն չի կրում մրցույթի հրավերում փոփոխություն կատարվելու հանգամանքով պայմանավորված մասնակցի կողմից կրած վնասի ռիսկը:
20. Սույն հրավերի պայմանների խախտմամբ ներկայացված հայտերը մերժվում են և վերադարձվում դրանք ներկայացնողներին:
21. Մասնակիցը մինչև հայտերը ներկայացնելու վերջնական ժամկետի ավարտն իրավունք ունի փոխելու կամ հետ վերցնելու իր հայտը: Հայտը փոփոխվում է սույն հրավերով հայտ ներկայացնելու համար սահմանված կարգով՝ ծրարի վրա ավելացնելով «փոփոխում» բառը:
22. Հայտերը բացվելու են 2019**թ հունիսի** 25-**ին**, **ժամը** 15-00-**ին** մրցութային հանձնաժողովի հայտերի բացման նիստում:
23. Ներկայացված հայտերի բովանդակությանը ծանոթանալու ընթացքում հանձնաժողովն իրավունք ունի առաջարկել մրցույթի մասնակցին ներկայացնել լրացուցիչ տեղեկություններ՝ առավել ամբողջական կարծիքի ձևավորման նպատակով:
24. Մասնակիցը կարող է ներկա գտնվել հանձնաժողովի հայտերի բացման նիստում:
25. Հայտերի բացման նիստում՝
    1) Հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում նիստը նախագահողը հայտարարում է նիստը բացված,
    2) Հանձնաժողովի քարտուղարը՝
       ա. տեղեկատվություն է ներկայացնում հայտերի մասին,
       բ. բացում է հայտերի ծրարները և դրանց լրակազմը ստուգելուց հետո ծրարում ներկայացված փաստաթղթերի մեկական օրինակ հանձնում Հանձնաժողովի անդամներին, նախագահողին է փոխանցում մրցույթի մասին հայտերը,
       գ. հանձնաժողովի անդամներին է տրամադրում ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կնիքով կնքված հայտերի գնահատման թերթիկների երկուական օրինակ՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո:
26. Հայտերի բացման նիստին չներկայացած հանձնաժողովի անդամներին հանձնաժողովի քարտուղարը գնահատման թերթիկների երկուական օրինակը տրամադրում է հայտերի բացման նիստի օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:
27. Հանձնաժողովի անդամները սույն հրավերով սահմանված կարգով գնահատում են մրցույթի մասին հայտերը և գնահատման թերթիկներում համապատասխան նշումներ կատարելու միջոցով հայտերի վերաբերյալ եզրակացություն են տալիս ու հայտերի բացման նիստում որոշված ժամկետում գնահատման թերթիկների մեկական ստորագրված օրինակները փոխանցում են քարտուղարին:
28. Մրցույթի արդյունքներն ամփոփվում են հանձնաժողովի ամփոփիչ նիստում՝ հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկների հիման վրա:
29. Հանձնաժողովն ընդունում է որոշում մրցույթին մասնակցած այն կազմակերպության (կազմակերպությունների) ցանկը հաստատելու մասին, որի հետ կարող է կնքվել դրամաշնորհի տրամադրման պայմանագիր և այն կազմակերպության (կազմակերպությունների) մասին, որի հետ չի կարող կնքվել նման պայմանագիր:
30. Նախնական պայմանագրի նախագիծը ներկայացված է հավելված 3-ում:
31. Մրցույթը չկայացած է հայտարարվում, եթե ոչ մի հայտ չի ներկայացվել, հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին, կամ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության Հրապարակային գնումների կոմիտեի նախագահը չի հաստատում հանձնաժողովի որոշումը:
32. Սույն հրավերի 31-րդ կետով նախատեսված դեպքում առաջարկվում է սահմանված կարգով հայտարարել նոր մրցույթ:

հավելված 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ և ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Հ Ա Յ Տ

2019 թվականին միջոցառումների իրականացման համար հայտարարված մրցույթի հրավերում նախատեսված

_____ միջոցառման իրականացման համար
(միջոցառման անվանում)
կազմակերպության ընտրության մրցույթին մասնակցության

Հայտատու կազմակերպության անվանումը_____

_____

Հասցե _____
Հեռախոս _____
Էլ. հասցե _____

Պետական գրանցման համարը _____

Կից ներկայացվող փաստաթղթերը_____
_____
_____
_____
_____

Էջերի ընդհանուր քանակը _____

Հայտի ներկայացման ամսաթիվը ------ / ----------2019 թ.

Կազմակերպության ղեկավարի ստորագրությունը _____

Կ.Տ.
(կնիքի առկայության դեպքում)

Հավելված 2

ՀԱՅՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳ

2019 թվականին միջոցառումների իրականացման համար կազմակերպության ընտրության մրցույթին ներկայացրած հայտերի գնահատումը կատարվում է ըստ հետևյալ չափանիշների՝

1) ***<u>Հրավերի 3-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված միջոցառման համար</u>***

Հ/Հ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ	ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ	ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ
1.	Ծառայությունների գինը	25	15
2.	Նմանատիպ միջոցառումների իրականացման փորձ	25	15

2) ***<u>Հրավերի 3-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված միջոցառման համար</u>***

Հ/Հ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ	ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ	ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ
1.	Տեխնիկական հագեցվածություն	25	15
2.	Գնային առաջարկ	60	40
2. 1	*դիզայներական մոդելավորման ծառայություններ*	15	10
2. 2	*թարգմանչական ծառայություններ*	15	10
2. 3	*տպագրական ծառայություններ* տարբեր ձևափաչերով	15	10
2. 4	*բովանդակության մշակման ծառայություններ*	15	15
3.	Նմանատիպ միջոցառումների իրականացման փորձ	25	15

3) ***<u>Հրավերի 3-րդ կետի 3-րդ և 9-րդ ենթակետերով նախատեսված միջոցառումների համար</u>***

Հ/Հ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ	ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ	ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ
1.	Ծառայությունների գինը	25	15
2.	Ծառայությունների որակը	25	15
3.	Նմանատիպ ծառայությունների մատուցման փորձ	25	15

4) ***Հրավերի 3-րդ կետի 4-ից - 6-րդ և 8-րդ*** **ենթակետերով ն*****ախատեսված միջոցառումների համար***

Հ/Հ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ	ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ	ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ
1.	Ծրագրի բովանդակությունը և նպատակաուղղվածությունը	25	15
2.	Ծրագրի մանրամասն նկարագրված լինելը	25	15
3.	Գնային առաջարկ	25	15
4.	Համագործակցություն և համաֆինանսավորում	25	15
5.	Նմանատիպ միջոցառումների իրականացման փորձ	25	15

5) ***Հրավերի 3-րդ կետի 7-րդ ենթակետով նախատեսված միջոցառման համար***

Հ/Հ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ	ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ	ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ
1	Գործունության մանրամասն նկարագրությունը և նպատակաուղղվածությունը	25	15
2	Տարածքի համապատասխանությունը ծառայություններ մատուցելու համար	25	15
3	Նմանատիպ ծառայությունների մատուցման փորձ	25	15
4	Ծառայությունների մատուցման ապահովում	25	15
5	Միջոցառման կազմակերպում	25	15

Ծրագրի շրջանակներում պայմանագիր կարող է կնքվել այն կազմակերպության հետ, որը գնահատման որևէ չափանիշով գնահատմանը մասնակցած հանձնաժողովի անդամների ընդհանուր նվազագույն գնահատականից ցածր գնահատական չի ստացել, և որի հայտի ընդհանուր գնահատականը առավելագույնն է մյուս հայտերի ընդհանուր գնահատականների համեմատությամբ:

հավելված 3

ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N

ք. Երևան ----- ---------- 2019**թ.**

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության կոմիտեն (այսուհետ՝ Պետական մարմին), ի դեմս _____, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ---------- (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս ----------ի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 445 հոդվածի, «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N 1937-Ն որոշման, 2019 թվականին միջոցառումների (այսուհետ՝ Ծրագիր) իրականացումն ապահովելու նպատակով՝ կնքեցին սույն նախնական պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. *ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ*

1.1. Պայմանագրով Կողմերը պարտավորվում են հետագայում կնքել հիմնական Պայմանագիր (այսուհետ՝ Դրամաշնորհի պայմանագիր), սույն Պայմանագրով նախատեսված միջոցառումները ներառող Զբոսաշրջության զարգացման 2019 թվականի ծրագիրն իրավասու մարմնի կողմից հաստատվելու և միջոցառումների իրականացման համար ֆինանսական միջոցներ հատկացվելու դեպքում:

1.2. Դրամաշնորհի պայմանագիրը կնքվում է Պայմանագրի պայմաններին համապատասխան՝ Պայմանագրի 1.1 կետով նախատեսված Զբոսաշրջության զարգացման 2019 թվականի ծրագիրը հաստատվելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

1.3. Պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով ՀՀ պետական բյուջեից կազմակերպությանը հատկացնել Զբոսաշրջության զարգացման 2019 թվականի ծրագրով նախատեսված չափով գումար՝ Պայմանագրի 2.1.2. կետով սահմանված հաշվետվության և Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի հրամանով ստեղծված Ծրագրով նախատեսված աշխատանքների ընդունման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) արձանագրության հիման վրա, իսկ կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Պայմանագրին համապատասխան:

1.4. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) և ծախսերի նախահաշիվը ներկայացված են համապատասխանաբար պայմանագրի N1 և N2 հավելվածներում (հավելվածները կձևավորվեն հաշվի առնելով հայտատուի ներկայացված ծրագիրը և գնային առաջարկը):

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. կազմակերպությունից պահանջել ծրագրով նախատեսված միջոցառումները կատարել սույն պայմանագրի 6-րդ կետում նշված ժամկետներում.

2.1.2.կազմակերպությունից պահանջել ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված ֆինանսական միջոցների նպատակային օգտագործման վերաբերյալ, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2015թ. ապրիլի 1-ի N176-Ն հրամանով հաստատված ձևերին համապատասխան.

2.1.3. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգել կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.4. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունել իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել պայմանագրի 5-րդ կետով նախատեսված տուգանքը.

2.1.5. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը խախտել է Ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները,

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.6. պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջել իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները,

2.1.7 Կազմակերպությանը տալ Ծրագրի իրականացման հետ կապված գրավոր հանձնարարականներ:

2.2. **Կազմակերպությունն իրավունք ունի՝**

2.2.1 Ծրագրով նախատեսված յուրաքանչյուր միջոցառման ավարտից հետո ներկայացնել հաշվետվություն.

2.2.2. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունելու դեպքում պահանջել վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.3. պետական մարմնի կողմից գումարները չվճարելու դեպքում միակողմանի լուծելու պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. **Պետական մարմինը պարտավոր է՝**

2.3.1. Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել Ծրագրի իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել Ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է Ծրագրի և պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. **Կազմակերպությունը պարտավոր է՝**

2.4.1. իրականացնել Ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և

պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ Ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.5. պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.8. Ծրագիրն իրականացնել պայմանագրին և Կոմիտեի գրավոր հանձնարարականներին համապատասխան:

2. 4. 9. Կողմերը պարտավորվում են հետագայում կնքել դրամաշնորհի Պայմանագիր սույն Պայմանագրով նախատեսված միջոցառումները ներառող Զբոսաշրջության զարգացման 2019 թվականի ծրագրի իրավասու մարմնի կողմից հաստատվելուց և միջոցառումների իրականացման համար ֆինանսական միջոցներ հատկացվելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

2. 4. 10. Պայմանագրի կնքումից առանց հիմնավորման շեղվող (մերժող) Կողմը պարտավոր է մյուս կողմին փոխհատուցել հասցված բոլոր վնասների համար:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը Ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է Ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4. Կազմակերպությանը վճարումները կատարվում են պետական բյուջեով նախատեսված գումարների սահմաններում Կատարողի կողմից ներկայացվող աշխատանքների կամ ծառայությունների մատուցման հաշվետվության հիման վրա՝ 20 (քսան) աշխատանքային օրվա ընթացքում:

5.Կողմերի պատասխանատվությունը

5. Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6.Պայմանագիրն ուժի մեջ մտնելը

6.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

7.Վեճերի լուծման կարգը

7.Պայմանագրի կապակցությամբ Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ հակառակ դեպքում վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9.Եզրափակիչ դրույթներ

9.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված Ծրագիրը հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը:

9.2. Պայմանգիրը կազմված է սույն հիմնական տեքստից և N 1 ու N 2 հավելվածներից, որոնք կազմում են պայմանագրի անբաժանելի մասը:

9.3. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.4. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.5. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	**Կազմակերպություն**
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության Զբոսաշրջության պետական կոմիտե	
Հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. Մկրտչյանի 5 Կենտրոնական գանձապետական գործառնական վարչություն Հ/Հ ՀՎՀՀ 02657891	Հասցե՝
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության Զբոսաշրջության կոմիտեի աշխատակազմի ղեկավար ՄԱՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ	
Կ.Տ.	Կ.Տ